

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 51 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր քառասուններեք, աշխատանքի տեղավորման՝ հինգ, գինվորական ստաժը վերականգնելու, Գորիսի մանկավարժական համալսարան ընդունվելու միջնորդության, դատական վճռի հարցերով՝ մեկական քաղաքացի: Դրամական օգնության դիմումներից երեսունյոթին տրվել է դրական լուծում, երեքը մերժվել են, երեքը ուսումնասիրության ընթացքում են:

Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին հինգ դիմումները, ընթացք է տրվել գինվորական ստաժը վերականգնելու վերաբերյալ դիմումին, ընթացքի մեջ է դատական վճռի վերաբերյալ հարցը, մերժվել է Գորիսի մանկավարժական համալսարան ընդունվելու միջնորդության վերաբերյալ դիմումը:

